

Rapiscan Eagle Gantry ռենտգենյան զննող սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայությունների գնման պայմանագիր

ք. Երևան

08.04.2014թ.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն (հետայսու՝ Կոմիտե), ի դեմս աշխատակազմի ղեկավար Արմեն Գևորգյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ *Պատվիրատու*), մի կողմից

և

«Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԵ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Բադար Ալան Խանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ *Կատարող*), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է *Պատվիրատուի* Մեղրու և Բագրատաշենի մաքսային կետերում տեղադրված *Rapiscan Eagle Gantry* ռենտգենյան զննող սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ *Ծառայություն*)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

On Procurement of Technical Maintenance Services for Rapiscan Eagle Gantry X-ray Screening Equipment

Yerevan

“08” April 2014

The RA State Revenue Committee adjunct to the Government of the Republic of Armenia (hereinafter referred to as the *Committee*), represented by Mr. Armen Gevorgyan, Head of Staff of the RA State Revenue Committee, acting in accordance with the Statute of the RA State Revenue Committee (hereinafter referred to as “the *Customer*”), on one part

and

«Arempa International» Ltd. FZE, represented by Mr. Badar Alan Khan, CEO, acting in compliance with the company’s bylaws, (hereinafter referred to as “the *Contractor*”), on the other part, have signed this Contract on the following:

1. SUBJECT OF THE CONTRACT

1.1 The *Customer* assigns and the Contractor agrees to provide technical maintenance of *Rapiscan Eagle Gantry* X-ray screening equipment (hereinafter referred to as “the *Services*”), installed at the *Customer’s* Meghri and Bagratashen customs points in compliance with the Technical Specifications and Procurement Schedule stipulated by Annex No 1 to this *Contract*, which is an integral part of this *Contract*.

1.2 *Ծառայությունը* մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել *Ծառայությունը*՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում,

1.2 *The Services* should be provided in compliance with the Technical Specifications and Procurement Schedule defined in Annex No 1 of this *Contract*.

2. RIGHTS AND DUTIES OF THE PARTIES

2.1 *The Customer* shall be entitled to:

2.1.1 To inspect the progress and the quality of the *Services* provided by the *Contractor* at any time without interfering into the activities of the *Contractor*.

2.1.2 If the rendered *Services* are not in compliance with the requirements stated in the Technical Specifications and Procurement Schedule defined in Annex No 1 of this *Contract*,

a. Reject acceptance of the *Services*, and at its discretion set a reasonable time period for gratis substitution of services, and also request payment of the fines under Clause 5.2 of this *Contract*, as well as penalties under Clause 5.3 of this *Contract*.

b. Renounce execution of the *Contract* and request the *Contractor* to refund proceeds received against delivered *Services*, as well as request the *Contractor* to pay penalties stipulated by Clause 5.2 of this *Contract*.

2.1.3 Terminate unilaterally this *Contract*, in case of significant breaches of this *Contract* by the *Contractor*. The breaches are considered as significant when:

էթէ՝ ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին, բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը Կատարողի կողմից : 2.2 Պատվիրատուն պարտավոր է՝ 2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին: 2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը: 2.2.3 Պատվիրատուի՝ Rapiscan Eagle Gantry ռենտգենյան սարքավորումների շահագործման գծով հիմնական պարտականությունները սահմանված են սույն պայմանագրի N 2 հավելվածում: 2.3 Կատարողն իրավունք ունի՝ 2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը: 2.4 Կատարողը պարտավոր է՝	a. The <i>Services</i> provided are not in compliance with the requirements stated in Annex No 1 of this <i>Contract</i>. b. The <i>Contractor</i> did not meet the terms agreed for providing the <i>Services</i>. 2.2 The <i>Customer</i> shall be obliged to: 2.2.1 Discuss and accept the <i>Services</i> performed in accordance with the Technical Specifications and Procurement Schedule and immediately inform the <i>Contractor</i> in writing on all incompliance revealed. 2.2.2 Where the provided <i>Services</i> are accepted, pay to the <i>Contractor</i> the agreed amounts and charges due for payment. Should the <i>Customer</i> breach the agreed payment terms, to request the <i>Customer</i> to pay penalties stipulated by Clause 5.5. 2.2.3 The main obligations of the <i>Customer</i> for the operation of Rapiscan Eagle Gantry equipment are defined in Annex No 2 of this <i>Contract</i>. 2.3 The <i>Contractor</i> shall be entitled to: 2.3.1 Demand from the <i>Customer</i> to pay amounts due for payment. Should the <i>Customer</i> fail to meet payment terms stipulated by Clause 4.2, to request to pay the fines stipulated by Clause 5.5 of this <i>Contract</i>. 2.4 The <i>Contractor</i> shall be obliged to:
---	--

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն գործողության ընթացքում Կատարողի նկատմամբ լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին անհապաղ գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Եթե սույն պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ընթացքում օգտագործվող պարագաների երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար Կատարողի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 5(հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված՝ կատարողական ակտերի հիման վրա կազմված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4): Պայմանագրով նախատեսված Ծառայության կատարման արդյունքներն ընդունվում են ամսական

2.4.1 Provide the *Services* stated in Annex No 1 to this *Contract*, ensuring that they are performed in line with the acting legislation.

2.4.2 Pay fines and penalties under Clauses 5.2 and 5.3 in the cases/events envisaged in this *Contract*.

2.4.3 Shortly inform the *Customer* in writing on any liquidation or bankruptcy proceedings initiated against the *Contractor* during the validity period of this *Contract*.

2.4.4 Should any deficiencies be revealed within the warranty period of the accessories used during implementation of the *Services* stipulated by this *Contract*, the *Contractor* shall pay to the *Customer* penalties for non performance or not proper fulfillment of the responsibilities under this *Contract*. The *Contractor* reimburses the *Customer* all expenses actually incurred by the *Customer* for eliminating those deficiencies.

3. PROCEDURE FOR DELIVERY AND ACCEPTANCE OF THE SERVICES

3.1 The due execution by the *Contractor* of its obligations or certain part of its obligations under this *Contract* shall be accepted by the *Customer* through signing of a Completion Certificate (hereinafter referred to as “the *Certificate*”), which should be duly signed by both parties. Within 5 working (five) days after completion of his contractual obligations, the *Contractor* shall submit to the *Customer* two originals of the *Certificates* (Annex No 4) prepared based on the *Report on provision of Services*, signed by the *Contractor*. Acceptance of the *Services* envisaged by this *Contract* should be arranged on a monthly basis, latest on

պարբերականությամբ, յուրաքանչյուր ամիս, տվյալ ամսին հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ 2013 թվականի դեկտեմբեր ամսվա մատուցված ծառայությունների դիմաց՝ պայմանագրի կնքման օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում: 3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝ ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները. բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ: 3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5(հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը: 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ 4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 768,600.00 (յոթ հարյուր վաթսուն ութ հազար վեց հարյուր) ԱՄՆ դոլլար, բայց ոչ ավել քան 320,813,640.00 (երեք հարյուր քսան միլիոն ութ հարյուր տասներեք հազար վեց հարյուր քառասուն) ՀՀ դրամ, որից 128,100.00 (մեկ հարյուր քսանութ հազար մեկ հարյուր) ԱՄՆ դոլլարին համարժեք ՀՀ դրամը ավելացված արժեքի հարկն է (ԱԱՀ,) բայց ոչ ավել քան 53,468,940.00 (հիսուն	the 5th (fifth) working day following the given month. As refers to the <i>Services</i> provided in December 2013, payment against these <i>Services</i> should be executed within 5 (five) working days after signing of the <i>Contract</i>. 3.2 The <i>Certificate</i> is signed when the <i>Services</i> provided are in compliance with the requirements of this <i>Contract</i>. Otherwise the results of Contract or its certain part performance shall not be accepted and the <i>Certificate</i> shall not be signed and the <i>Customer</i>: a) Takes the measures envisaged by this <i>Contract</i> for settlement of such circumstances b) Imposes against the <i>Contractor</i> liability measures envisaged by this <i>Contract</i>. 3.3 The <i>Customer</i> shall return to the <i>Contractor</i> one signed original <i>Certificate</i> or a substantiated letter on the refusal of acceptance of the rendered <i>Services</i> within 5 (five) days after receiving the <i>Certificate</i>, 4. PRICE OF THE CONTRACT 4.1 The total price of the <i>Services</i> to be provided by this <i>Contract</i> constitutes USD 768,600.00 (in words: USD seven hundred sixty eight thousand six hundred), but no more than AMD 320,813,640.00 (in words: AMD three hundred twenty million eight hundred thirteen thousand and six hundred forty), which includes AMD equivalent of USD 128,100.00 (in words: USD one hundred twenty eight thousand and one hundred) , but no more than AMD
---	--

երեք միլիոն չորս հարյուր վաթսուն ութ հազար ինը հարյուր քառասուն) ՀՀ դրամ, իսկ 128,100.00 (մեկ հարյուր քսանութ հազար մեկ հարյուր) ԱՄՆ դոլլարին համարժեք ՀՀ դրամը ոչ ռեզիդենտի շահութահարկն է (ՈՌՇ,) բայց ոչ ավել քան 53,468,940.00 (հիսուն երեք միլիոն չորս հարյուր վաթսուն ութ հազար ինը հարյուր քառասուն) ՀՀ դրամ: Կատարողին ծառայության դիմաց վճարվելիք ընդհանուր գույք գումարը կազմում է 512,400.00 (հինգ հարյուր տասներկու հազար չորս հարյուր) ԱՄՆ դոլլար, բայց ոչ ավել քան 213,875,760.00 (երկու հարյուր տասներեք միլիոն ութ հարյուր յոթանասունհինգ հազար յոթ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, որը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ ԱՄՆ դոլլարով, վճարման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված ՀՀ դրամ / ԱՄՆ դոլլար փոխարժեքին համաձայն՝ դրամական միջոցները Կատարողի բանկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014 թվականի դեկտեմբերի 25-ը:

Սույն պայմանագրի 4.1 նշված ԱԱՀ-ի և ՈՌՇ-ի

53,468,940.00 (in words: AMD fifty three million four hundred sixty eight thousand and nine hundred forty) to be paid as Value Added Tax (VAT), and AMD equivalent of USD 128,100.00 (in words: USD one hundred twenty eight thousand and one hundred) , but no more than AMD 53,468,940.00 (in words: AMD fifty three million four hundred sixty eight thousand and nine hundred forty) to be paid as Non Resident Tax (NRT). Therefore, the net amount to be paid to the **Contractor** constitutes USD 512,400.00 (in words: USD five hundred twelve thousand and four hundred), but no more than AMD 213,875,760.00 (in words: AMD two hundred thirteen million eight hundred seventy five thousand and seven hundred sixty). The Price of this **Contract** is not subject to any change, and the **Contractor** may not request to increase, as well as the **Customer** may not request to reduce this Price.

4.2 The **Customer** pays against delivered **Services** in USD via transferring funds to the Contractor's bank account at the USD/ AMD exchange rate established by the Central Bank of the Republic of Armenia as of the date of payment. The transfer of funds is executed based on the **Certificate** and in accordance with the **Payment Schedule** established in Annex No 3 of this **Contract**. Paid amount may not exceed the same stipulated by the **Payment Schedule**. (When the **Certificate** is issued and submitted after the 20-th day of the given calendar month, the payment is executed within 20 (twenty) banking days). In case the funds defined by the **Payment Schedule** are not sufficient to cover the amounts of the accepted **Services** , then unpaid balance will be paid within the month where the proceeds are available, but not later than December 25-th, 2014.

The VAT and NRT stipulated by Clause 4.1 of

գումարները՝ Պատվիրատուի կողմից փոխանցվում են ՀՀ պետական բյուջեի համապատասխան հաշիվներին՝ վճարման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված ՀՀ դրամ / ԱՄՆ դոլար փոխարժեքին համապատասխան:

Կատարողը Ծառայության մատուցման ընթացքում անհրաժեշտ պարագաների ներմուծումը իրականացնում է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի անունով՝ որի ՀՀ օրենսդրությամբ սահմանված մաքսագերծման վճարումները կատարում է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն; ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից մաքսագերծման ժամանակ վճարված գումարները Պայմանագրի 3.1. կետով նախատեսված կարգով Կատարողի կողմից Պատվիրատուին հանձնած Ծառայության ժամանակ պակասեցվում է Կատարողին վճարվելիք գումարներից: Մաքսագերծված ապրանքները ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն հանձնում է Կատարողի լիազորված ներկայացուցչին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված

this *Contract* are paid by the *Customer* to the State Budget (Exchequer) account based on USD/ AMD exchange rate established by the Central Bank of the Republic of Armenia as of the date of payment.

During provision of *Services* all necessary accessories may be imported by the *Customer* in the name of the RA State Revenue Committee and all payments defined by the RA legislation in connection to the customs clearance procedure will be covered by the RA State Revenue Committee. All expenses incurred by the RA State Revenue Committee in respect of customs clearance of the imported accessories will be deducted from the amounts, subject for payment to the *Contractor* as per Clause 3.1 of this *Contract*. The customs cleared accessories should be handed over by the RA State Revenue Committee to the authorized representative of the *Contractor*.

5. THE RESPONSIBILITY OF THE PARTIES

5.1 The Contractor is responsible for provision of the *Services* in accordance with the requirements stipulated by this *Contract*.

5.2 In case the *Contractor* provides *Services not* corresponding to those stipulated by the Technical Description and Procurement Schedule stated in Annex No 1 of this *Contract*, the *Contractor* shall pay penalties at the rate of 0.5% (zero point five percent) of the amount specified in Clause 4.1 of this *Contract*.

5.3 In case the *Contractor* breaches the terms stipulated for provision of the *Services*, the *Contractor* for each day of delay shall pay

օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱՅՈՐ)

Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն

penalty at the rate of 0.05% (zero point zero five percent) of the amount of the Services to be rendered but not provided.

5.4 The fines and penalties calculated in accordance with Clause 5.2 and Clause 5.3 of this **Contract** shall be offset against, or deducted from the amounts payable to the **Customer**.

5.5 In case the **Customer** breaches the terms stipulated by Clause 4.2 of this **Contract**, the **Customer** for each day of delay pays fine at the rate of 0.05% (zero point zero five percent) of the amount to be paid but not paid.

5.6 In the cases not envisaged by this **Contract**, the Parties shall be subject to responsibility for failure to perform or for improper execution of their obligations, in the manner defined by the RA legislation.

5.7 The payment of fines and/or penalties does not release the Parties from full performance of their contractual obligations.

6. FORCE MAJEURE

Neither Party of this **Contract** should be liable for failure to meet in whole or part of its contractual obligation in case such failure is due to Force Majeure circumstances/events, which commenced after signing of this **Contract**, and which were beyond their reasonable control and the Parties were not in position to foresee or prevent occurrence of those circumstances/events. Such circumstances/events are: earthquake, flood, fire, war, proclamation of military and emergency

հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը և տարածվում է կողմերի միջև 2013 թվականի դեկտեմբերի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.2 Այն դեպքում, երբ “Գնումների մասին” ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ

situation, civil disturbances, strikes or labor disputes, cessation of work of means of information transfer, other such circumstances/events which make impossible performance of contractual obligations . If the influence of Force Majeure lasts more than 3 (three) months, either Party has the right to terminate this **Contract** informing the other party about it beforehand.

7. OTHER CONDITIONS

7.1 This **Contract** enters into force upon its signing by the Parties and remains effective until full performance of contractual obligations by the Parties. The terms and conditions of this **Contract** should be applied to the relationship factually arisen between Parties since the 1st December 2013.

Any payment obligation of a Party to this **Contract** cannot be seized or offset against a payment obligation under other Contract, without signed and sealed written consent of both Parties. Any right to claim under this **Contract** may not be transferred to any third party without written consent of the debtor Party.

7.2 In cases, when a control and (or) supervision of the compliance to the requirements of Procurement process with effective legislation, carried out in correspondence with RA “Law on Procurement” reveals that the **Contractor**, prior to signing of this **Contract** has submitted forged documents (information, data), or the decision on declaring (selection) the **Contractor** as the winner in bidding process does not comply with Armenian legislation, then after the emergence of such grounds the **Customer** will have the right to unilaterally terminate this **Contract**, if revealed inconsistencies if known prior to the signing of this **Contract** would have constituted as

հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման շուկայական գների ավելի քան 20% (քսան) տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես

sufficient basis for not signing of this **Contract** in accordance with the Republic of Armenia legislation on procurement. Meanwhile, the **Customer is not responsible** for the losses or the risk of lost profit of the **Contractor** incurred due to unilateral termination of the **Contract**, while the **Contractor**, following the procedure specified by the Republic of Armenia legislation, shall compensate the losses of the **Customer** incurred by the **Contractor** in the amount, which is not covered by the proceeds received by the **Contractor** from the procurement contract performance prior to its termination.

7.3 This **Contract** may be amended or supplemented only upon mutual consent of the Parties through signing of an Agreement which will become an integral part of this **Contract**. This **Contract** may not be amended due to partial mis-performance of contractual obligations by the Parties, or may not be entirely terminated by mutual consent of the Parties, except:

